/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ ՎՊԻՆ անդամ-ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ.Անանյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ավստրիա /Վիեննա/ 19-21.12.2018 թ.

- **Նպատակը**

Մասնակցելու ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված՝ «Արդյունաբերության վիճակագրության կատարելագործում և արդյունաբերական ցուցանիշների բարելավում ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծությունների համար» խորագրով տարածաշրջանային ծրագրի շրջանակում բարձր մակարդակի խորհրդատվական հանդիպմանը:

- **Քննարկված թեմաները**

Խորհրդատվական հանդիպմանը անդրադարձ եղավ ծրագրի 1-ին փուլի օբյեկտիվ ամփոփմանը, և տարածաշրջանային ծրագրի 2-րդ փուլի ձևավորման քննարկումներին: Հանդիպումը միավորեց տարածաշրջանի առաջատար վիճակագիրներին՝ ընդգծելով նրանց հիմնական առաջնահերտություններն առաջիկա ծրագրում:

Հանդիպմանը ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության խորհրդատու Իգոր Ուլյանովը ներկայացրեց տարածաշրջանում արդյունաբերական վիճակագրության հիմնական խնդիրները, որոնք պետք է լուծվեն ծրագրի II փուլում՝ Արդյունաբերական արտադրության ինդեքսը (ԱԱԻ) տարածաշրջանային մակարդակում, ԱԱԻ-ի նախնական գնահատման մեթոդներ, արդյունաբերության վիճակագրության որոկի վերանայում, կայուն զարգացման ցուցիչների ձևավորման մեթոդաբանություն:

ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տնտեսական վիճակագրության վարչության արդյունաբերության և ինովացիայի վիճակագրության բաժնի փորձագետ Ռաֆայել Դենիշևվը ներկայացրեց արդյունաբերության վիճակագրության ներդաշնակեցման հետ կապված հարցերը՝ ԱՊՀ վիճակագրական կոմիտեի կողմից հավաքագրվող արդյունաբերության վիճակագրության ցուցանիշները, ԱՊՀ վիճակագրական կոմիտեի կողմից արդյունաբերության վիճակագրության տվյալների տարածումը, արտադրանքի և տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների ներդաշնակեցման խնդիրները:

Ռոսստատի ձեռնարկությունների վիճակագրության վարչության պետ Ելենա Շուստովայի կողմից ներկայացվեց «Նորարարությունները և արդյունաբերության վիճակագրության համակարգում չլուծված խնդիրները, ՌԴ-ում ԿԶՆ ցուցանիշները» խորագրով շնորհանդես:

Առանձնակի շնորհանդեսներ ներկայացրեցին նաև ԱՊՀ անդամ այլ երկրները (Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ադրբեջանը և այլն), որոնք վերաբերում էին՝ 2013-2018 թվականներին ԱՊՀ երկրներում արդյունաբերական վիճակագրության կատարելագործմանը և արդյունաբերության զարգացման վերլուծության համար վիճակագրական ցուցանիշների մշակմանը, միջազգային և եվրոպական ստանդարտներին արդյունաբերության վիճակագրության ներդաշնակեցմանը, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության և ազգային վիճակագրական գրասենյակների համագործակցության արդյունքներին, կայուն զարգացման նպատակներին հասնելու համար տեղեկատվական աջակցությանը:

Հայաստանը հանդես եկավ «Ինչ է վարչական ռեգիստրը և նրա ինտեգրացիոն մոդելը» խորագրով շնորհանդեսով, որտեղ կարևորվեց վարչական ռեգիստրների դերը վիճակագրական համակարգում, ցուցանիշների հավաքագրման կրկնորդությունների բացառման և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման հիմնահարցերը:

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության փորձագետ Շյամ Ուպադհյայան ներկայացրեց ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության տվյալների հարթակը և ԿԶՆ ցուցանիշները մասնավորապես՝ նպատակ 9՝ Արդյունաբերություն, նորարարություն, ենթակառուցվածք. ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ներառական և կայուն արդյունաբերության զարգացմանը ու խթանել նորարարությունը:

Քննարկվեցին նաև Ազգային վիճակագրական գրասենյակների առաջարկությունները ծրագրի II փուլի իրականացման կարևորության և դրան առաջվող հիմնախնդիրները ԿԶՆ ցուցանիշների վերաբերյալ: Դրանք են՝արդյունաբերական արտադրանքների մրցունակության վերլուծական ցուցիչների, արտադրական հզորությունների օգտագործման, ինդուստրիալիզացիայի և նորարարությունների ցուցանիշները, ինչպես նաև տարածքային ինդեքսների հաշվարկման կատարելագործումը:

Հանդիպումն ավարտվեց սեմինարի ընթացքում քննարկված հիմնական կետերի ամփոփմամբ:

Խորհրդատվական հանդիպման մասնակցության շնորհիվ ՀՀ ՎԿ-ն իրազեկվեց արդյունաբերության վիճակագրության մեջ նախատեսվող զարգացումներին, ԿԶՆ ցուցանիշների վարման հետ կապված հարցերին, որը կնպաստի քաղաքական որոշումներ կայացնելու համար վիճակագրության ձևավորմանը, ինչպես նաև միջազգային համադրելիության ապահովմանը:

- **Նշումներ**

Այցելության հետ կապված ծախսերը կատարվել են ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից: Աշխատաժողովին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Մոլդովայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ադրբեջանի վիճակագրական ծառայությունների և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչները:

ՀՀ ՎՊԽ անդամ-
ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ Գ.Անանյան